

ԱՐԵՒՄՏԵԱՆ ԱՍԵՐԻԿԱՅԻ ԼՐԱՅՈՒՔ Ուրբաթ, 7 Դեկտեմբերի, 2007

Շաբաթ, Դեկտեմբերի 1-ի երեկոյեան, Բեվլըրլի Յիլզ քաղաքում, Յ.Յ.Դ. «Շանթ» ուսանողական միութեան եւ Յայ երիտասարդաց դաշնակցութեան անդամները բողոքի ցոյց կատարեցին Յայոց Ցեղասպանութիւնը ուրանալու հրեական ADL կազմակերպութեան ղեկավար Աբրահամ Ֆոքսմանի փորձի դէմ: Բողոքի ցոյցը կազմակերպուել էր Ֆոքսմանի ներկայութեան առիթով ADL-ի ձեռնարկի ժամանակ: Հակառակ ցուրտ եղանակին, ցոյցին ներկայ էր նաեւ Ցեղասպանութեան վերապրողներից հարիւրամեայ Ղազարոս Գատեմեանը: Իր ընտանիքի կողմից հրապարակուած յայտարարութեան մէջ Ղազարոս Գատեմեանն անդրադարձել է իր գերդաստանի կրած մարդկային կորուստներին եւ կոչ ուղղել՝ ամերիկեան կառավարութեանը, որ անվերապահօրէն ընդունի Յայոց Ցեղասպանութեան ճանաչմանը վերաբերող Կոնգրեսի 106-րդ բանաձեւը: Տարիներից ի վեր, ADL կազմակերպութիւնը թուրքական կառավարութեան օգտին լրբիստական աշխատանք է կատարում, ընդդիմանալով Յայոց Ցեղասպանութեան ճանաչմանը: Ցոյցի ընթացքում Յայ երիտասարդաց դաշնակցութեան կողմից ելոյթ ունեցաւ Արեգ Սանդիկեանը, յայտարարելով, որ Յայոց Ցեղասպանութեան նկատմամբ ADL-ի կեցուածքը հակասում է կազմակերպութեան առաքելութեանը:



Հրեական ADL կազմակերպութիւնը որոշել էր նաեւ Գլենդէլի «Հուվըր» միջնակարգ դպրոցում կազմակերպել եռօրեայ սեմինար՝ հանդուրժողականութեան եւ մարդու իրաւունքների վերաբերեալ: Շրջանի հայ համայնքը եւ Գլենդէլի Յայ Դատի Յանձնախումբը բողոք էին ներկայացել Գլենդէլի պետական դպրոցների կրթաշրջանին՝ սոյն սեմինարի արտօնման կապակցութեամբ: Երկուշաբթի, Դեկտեմբերի 2-ին Գլենդէլի պետական դպրոցների կրթաշրջանը յայտարարեց, թէ յետաձգել է ADL-ի յիշեալ սեմինարը՝ Յայոց Ցեղասպանութեան նկատմամբ ADL կազմակերպութեան ընդունած դիրքորոշման պատճառով: Կրթաշրջանի նախագահ Գրեգ Գրիգորեանը անհասկնալի էր համարել, թէ ADL-ի նման մի կազմակերպութիւն, որը հանդուրժողականութիւն եւ ճշմարտութիւն է քարոզում, ինչպէ՞ս կարող է գործել Յայոց Ցեղասպանութիւնը ուրանալու թուրքական կեցուածքի օգտին:



Նոյեմբեր 29-ից մինչեւ Դեկտեմբեր 2-ը Սան Դիագոյի Convention Center քաղաքային դահլիճում տեղի է ունեցել Միացեալ Նահանգների դպրոցներում պատմութիւն դասաւանդող ուսուցիչների 89-րդ ամենամեայ խորհրդաժողովը, որին հրաւիրուել է մասնակցել է ՀՅԴ Արեւելեան Ամերիկայի Յայ Դատի Յանձնախումբը՝ Յայոց Ցեղասպանութեան միւթը ամերիկեան դպրոցների պատմութեան դասագրքերում դասաւանդելու վերաբերեալ ուղղութիւններ եւ ծանօթութիւններ տալու համար: Ելոյթ ունենալով միջոցառմանը, Յայ Դատի Յանձնախմբի ներկայացուցիչ Կարինէ Պիրազեանը եւ պոնտացի յոյների ընկերակցութեան ներկայացուցիչ Անաստազիա Աքուփասը անդրադարձել են Յայոց եւ պոնտացիների ցեղասպանութիւնների դասաւանդման կարեւորութեանը եւ մանրամասնութիւններ յայտնել՝ պատմութեան դասաժամներին այդ հարցերի արժարժման միջոցների մասին: Սան Դիագոյի Union Tribune թերթը անդրադառնալով խորհրդաժողովի գումարմանը եւ յատկապէս Յայոց Ցեղասպանութեանը, ընդգծել է, որ ամերիկեան դպրոցներում Յայոց Ցեղասպանութեան միւթը շատ այժմեական է դարձել եւ մեծ հետաքրքրութիւն է առաջացրել մանկավարժների մօտ: Թերթը մասնաւորապէս ծանրացել է Պիրազեանի եւ Աքուփասի ելոյթների վրայ:



Կիրակի, Նոյեմբերի 18-ի երեկոյեան ժամը 6:30-ին Հոլիվուդի «Տաղլեան» նորակառոյց սրահում տեղի է ունեցել գրող Դէյվիդ Քրոֆեանի խմբագրած «Forgotten Bread» այն է՝ «Մոռցուած հացը» գրքի շնորհանդէսը, որը հովանաւորել էր «Համազգային» հայ կրթական ու

մշակութային ընկերակցութեան Արեւմտեան Ամերիկայի Շրջանային վարչութիւնը:
Միջոցառմանը ներկայ են եղել աւելի քան 270 հիւրեր, մշակութասէրներ եւ միութենականներ:
Գրքուն ընդգրկուած են ամերիկահայ անգլագիր գորղների լաւագոյն
ստեղծագործութիւնները: Ելոյթ ունենալով միջոցառմանը, «Համազգային»-ի Շրջանային
վարչութեան ատենապետ՝ դոկտ. Վիգէն Եագուպեանը յայտարարել է, որ միջոցառման
ամբողջ հասոյթը յատկացուելու է յատուկ կրթաթոշակների հաստատման՝ այն ուսանողների
եւ անձանց համար, ովքեր ստեղծագործում են արուեստի զանազան բնագաւառներում:



Կիրակի, Նոյեմբերի 11-ի առաւօտեան ժամը 7:30-ին Գլենդէլի համայնքային քոլէջի
մարզադաշտում մեկնարկեցին ՔԱՀԱՄ-ի այն է՝ Քալիֆորնիայի Հայ աշակերտական
ամենամեայ 24-րդ մարզախաղերը, որոնք կազմակերպուում են Հ.Ս.Ը.Մ.-ի Արմտեան
Ամերիկայի Շրջանային մարզական խորհրդի կողմից նպատակ ունենալով համախմբել
շրջանի հայ աշակերտութեանը եւ խրախուսել նրանց մաս կազմելու Հ.Ս.Ը.Մ.-ի մեծ
ընտանիքին: Այս տարի մրցախաղերին մասնակցում է «Ռոզ եւ Ալէք Փիլիպոս», «Արի
Կիրակոս», Հայ Քոյրերի, «Արշակ Տիգրանեան», «Յովսէփեան», «Շամլեան», «Սահակ
Մեսրոպ», «Ֆերահեան», Հ.Բ.Ը.Մ.ի «Մանուկեան-Տէմիրճեան», «Մերտինեան»,
«Մխիթարեան» եւ «Մեսրոպեան» վարժարանների երկսեռ աշակերտութիւնը:

**Այս լուրերը տրամադրուում են
ՀՀԴ Արեւմտեան Ամերիկայի
Կեդրոնական Կոմիտէի
Հանրային Կապի Գրասենեակի կողմից
ARF Central Committee
Office of Public Relations
Contact Person: Saro Nazarian
PublicRelations.ARF@hotmail.com
Tel: (818) 243-7059
Fax: (818) 243-1467**

**Այս լուրերը տրամադրելի են նաեւ Internet-ով եւ Fax-ով:
Լուրերը կարելի է վերահրատարակել:**